31. ԾՈՒԿՆԻՆ ԿԸԼՈՒԽԸ

Ընում ա, չընում մին քյասիր մարթ նան կրնեգյ։ Ըտրանց ընում ա մին օթ տըրեկան տըղա խոխա։ Էտ մարթը ծուկըն փըռնող ա ընում, ուրան մին կուտուր հացը ըտրանավ ա աշխադըմ։

Մին օր էտ խըեղճ մարթը եր ա ընգնըմ, մըեռնըմ։

Կրնեգյը նան տըղան մընըմ ըն սոված-ծարավ։

Էտ կընեգյը վրեր տըեսնըմ ա ուրան աշկին սևը-սիպտակ խոխան օրանցօր մաշվըմ ա, ասըմ ա. — Այանը քը մատաղ, ա՛յ իմ բալա, այ իմ աշկիս լուս, իմ աշխարքըս, իմ կյանքս, արևըս, խստի սոված եր ընք ընգալ, հի՞նչ անինք։ Էլհա քու հոր սաղ վախտը ծըեռքավը մին պըեն ար կյամ, շատան, խըրեգյան ծուկըն ար փըռնըմ, տանըմ բըզարրմը ծախըմ, էլհա մին կուտուր հաց ար ընում, բա մըհեգյ հի՞նչ անինք։

Էտ տըղան էլ մին շատ խելունք, կյեղեցիկ, շատ է՞, շատ կյեղեցիկ տըղա յա ընում։

Էտ տըղան ասում ա. — Ա՛ մար, իմ հոր թոռը տո, յըես էլ քյինիմ ծուկնը փըռնիմ, պըերիմ։

Մարն ասըմ ա.— Բոյիտ մատաղ, շանիտ մատաղ, հալա պուճուր ըս, կարիլ չըս, օժըտ պատիլ չի թոռը յոր օնիս, մըեշկիտ ցավ կըտա, մըեշկըտ կը ճըմի։

Էտ խոխան ըտրան լըսըմ չի, թոռը շըլակըմ ա, քյընըմ ծովին ղրաղը։

էն մրեծ թոռչուցը եշելավ, թոռը ճուրն ա քցում, միչև ուրուգյունը ըտրեղ չըրչարվում, մին քանի ծուկնը փրոնում, տոն պըերում։

Մարը վըեր տրեսնում ա, շատ ա ուրխանում ուրան մըթկըմը։ Պըչպըչորում ա տըղին, կըլոխը սըղալում, ասում. — Այան քյըեզ մատաղ, մըհեկանց տրենը հի՞նչ դարդ օնիմ, վըեր տու իտի խելունք ըս, ծրեռքավըտ պըեն ա կյամ։ Մարըն էլ խըրեգյ-մըրեգյ օրիշի կործ ա անում։

Իտիյութունավ մարըտըղա մին թահրավ ապըրում ըն։ Էտ տըղան օրանցօր շատ ա ծուկըն փրոնում, ինքըն էլ յավաշ-յավաշ մըծանում ա։

Մարըտըղա մին խոսկի յըն կյամ, վըեր քյինին ուրանց անա մոտիկ քաղաքըմը ապրին։ Իտի էլ անում ըն։ Տըղան ուրան փրոնած ծուկնը պըերում ա քաղաքին բազարըմը ծախում։ Վերչըն էլ մին դուքյան ա պըեց անում, ծուկնը ծախում։

Անց ա կըենում մին քանի տարի։ Էտ տըղան մըծանում ա, տրեռնում մին չըտեսնված կյեղեցիկ տըղա։ Թաքավերին ըխճըկորցանը մինը էտ տըղին տրեսնում ա, յրան սիրահարվում։

Մին օր էլ համին էտ թաքավերին ախճիգյը ուրանց մին վեզիրին ասում ա. — Մըհեկանց տրենը թող էտ ծուկուն ծախող տըղան ինքը ուրան ծրեռավը ծուկնը պըերի մըեր պալատը, համ էլ կյա իմ կոշտրս։

Էտ վեզիրը կյամ ա էտ տըղին դուքյանը, կըլոխ տամ, ասում. — Թաքավերին ախճիգյը ասալ ա, վըեր ծուկնը տու ինքըտ պըերիս մըեր պալատը, ընտրանա ետը քյինիս էտ ըխճըկանը կոշտը, քյըեզ պըեն ա ասելու։

Էտ տըղան քյընում չի։ Թաքավերին ախճիգյը մին քանի հետ վեզիրին ղարկում ա, ամմա էտ տըղան էլհա չի քյընում։

Թաքավերին ախճիգյը էլ իվիլ ա էտ տըղին յրան թըքանում։ Քըշեր-ցիրեկ ըտրա հետի յա քընենքյ անում, հացա, ճըրա կտըրվում, մաշվում-մաքրվում, տանշվում, լաց ընում, ամմա կարում չի ուրան սերը վըեշ մինին ասի, հըմանչում ա, համ էլ հորըն անա վախում ա, գյուդում ա, վըեր հաբը ուրան էտ տըղին չի տալ։ Վըեր էտքան հալվում ա, մաշվում, մին օր էլ թաքավերը օղում ա գյիդա ըտրա մանին։ Վերչը էտ պըենը պարզվում ա։

Թաքավերը էնքան շատ ար սիրում էտ ըխճըկանը, վըեր ըտրա խաթրը կոտրում չի, խոսկ ա տամ էտ տըղին նըհետ ըտրա փըսակի։

Ը՞ր ա կըենում մին խիլլա վըեսկե, տրեսըտրեն շինում, ուրան պալատին մին քանի մարթկանց նըհետ ըղըրկում էտ տըղին տոնը։

Էտ մարթկանցան մինը էտ տըղին նան ո̈ւրա̈ն մորըասըմ ա.

—Դե պեց ասիմ, վըեչ հըմանչիմ, թաքավերը օղըմ ա՝ ո̈ւրա̈ն ախ-ճիգյը տա քու տըղիտ։

Մա̈րըտըղա մընըմ ըն մըլորված, մորը հավատը կյամ չի, թա թաքավերը ո̈ւրա̈ն տըղին ախճիգյ կըտա, ախճիգյը կը պըերի կոխի էտ քյասիր տոնը, ո̈ւրա̈նք ո̈ւրա̈նցավ ապրող տըեղը։

Թաքավերին էտ զարկած մարթը պադարկեքը տընում ա ըստո-լին, համ էլ ասըմ.— Ա՛ քյո̈ւր, խե՞ յըս դա̈րդ անըմ, վըեր թաքավերը ախճիգյը տըղիտ տա, հու խտի չըք մընալու, հու տըղատ ծո̈ւկըն փըռնող չի կըենալու, մըեծ հարուստոթուրի տա̈ր ա տըեռնալու։

Մարն ասըմ ա. — Էտ խոսկը էնքան սըրտանց ըս ասըմ, վըեր հըվատըմ ընք։ Դե հիշ կինի, թաքավերին աշկըն էլ մըզ յրա քախծըր կինի, մոմք էլ մին մարթի թայ կը տըեռնանք, խստի կոչ չընք կյալ, կըծեգյ տըռնալ։

Ըտըեղ ո̈ւրո̈ւր խոսկ ըն տամ, ռազի յըն կըենըմ, էտ պըենը ա̈մա̈լ կյալի պըեն ա տըեռնըմ։ Մին քանի օրանը եռը թաքավերին պալատըմը մին շատ ափաթ հըրսանիք ըն անըմ, հի՛նչ հըրսանիք, մին օրիշ պըեն, ըստոլնին լիգյը աշխարքիս լա̈վ պըեններավը, օտելի, խըմելի պըենները լիգյը—լափու տամ, սաղ քաղաքը զըրթարըմ ըն զա̈տկի, զըրզա̈րթա̈րի մընան, վըեսկե արծաթըն էլ կյետի մընան քյընըմ ա։ Օխտը օր, օխտը քըշեր վըեր հըրսանիք ըն անըմ, պըրծնըմ, առաջին քըշերը... Ախեր առաջի քըշեր էլ կա՞, առաջի քըշեր էլ։ Հենց առաջի քըշեր կա, էրկու զոլան սերավ, հենց առաջի քըշեր էլ կա, վըեր անսեր ա ընում, դե խտինին տոնը քանդված ա, սըերտը կոտրած ա հավիդյան, դե խտինը լա̈վ ա քյինի վախտին սըեվ վըեղը նի մըննի։ Ըտրանց առաջին քըշերը սերավ ա ընո̈ւմ։ Ամմա հոմց ա պըտահըմ առաջին էտ քըշերը, տըղան ըսկըսըմ ա էտ ըխճը-կանը սիրիլը, կըլո̈խը սըղալիլը։

Էտ ախճիգյը ասըմ ա.— Է՛յ, յավաշ, էտ հու ծո̈ւկնի կըլո̈խ չի՛, թաքավերի ըխճըկա կըլո̈խ ա՛։

Դե բա̈լքյա̈ս էտ ախճիգյը առանց փիս մըթկի յա ասըմ, չո̈ւնքի վըեր էտ տըղին շատ ար սիրըմ։ Ամմա էտ տըղին քյեփին շատ ա նի կյամ։ Էտ տըղան եր ա կըենըմ, տո̈ւս կյամ, քյընըմ։ Քյընըմ ա ծո-վին ղըրաղը, ընդըզան էլ պըրախոդ նըստըմ, քյընըմ։ Շատ ա քյը-նըմ, թա խըրեգյ, վըերչը հըսնըմ ա մին օրիշ թաքավերոթուն։ Ըտըեղ ո̈ւրա̈ն ինդի յա նըշանց տամ, գյըվա̈քյիս թա լո̈ւզո̈ւն լալիգյ ա։

Նի յա մըննըմ մին աշպազխանա, ընգըեղ ծառա տըեռնըմ։ Ըտրա կյեղեցկոթուման, հու վըեր տըեսնըմ ա, մաթ ա մընըմ,

չհա՜ ասում ա. «Օտիմ վրեչ, խրմիմ վրեչ, քըշեր-ցիրեկ էս տըղին թըմաշա անիմ». մին պատկեր, մին օզգյա՜ պրե՜ն։

Ըտրա կյեղեցկութունին ծրենը ըտըղին թաքավերին անգուճավըն ա ընգնում։ Էտ թաքավերը ըտրան ուրա՜ն պալատըն ա տանում, նա՜զիր-վա՜զիրին կանչում, ասում.— Ա՛ նա՜զիր-վա՜զիրնի, էս տըղան էսքան կյեղեցիկ, մեխկ ա իստի լալեգյ թողինքյ, քյեցեք սաղ աշխարքավրս մին շառ կանչիլ տըվիք, թա. «Հու վրեր կարի էս լալեգյ տըղին խուսուցընի քըշըռութունավը մին վրեսկե յըմ տալու»։

Էս նա՜զիր-վա՜զիրնին շառ կանչիլ ըն տամ։ Ամմա վրեշ մինը կարըմ չի էտ տըղին խուսըցնի. հու վրեր կարըմ չի, թաքավերը կըլո՜խը կըտրիլ ա տամ։

Վրեր իտի շատ ման ըն կյամ, խա՜բա՜ը հըսնում ա թաքավերին ըխճըկանը, թա մին կյեղեցիկ տըղի խուսըցընելի հըետի մարթ ըն ըսպանում։ Տա էն մունուտին գյուդում ա, վրեր ուրա՜ն մարթըն ա, հայտնում ա, վրեր ինքը կը խուսուցընի։ Մըեծ պարախոդ ա նըստում, կյամ էտ վրեղը։

Կյամ ա էտ թաքավերին կոշտը, ասում. — Թաքավերը ապրած կըենա, ինձ իրեք օր ժամանակ տո, յըես խուսուցընիմ, թա կարիմ վրեչ խուսուցընիմ, կըլո՜խըս կըտրի։

Էտ իրեք օրըմը թաքավերին ախճիգյը էտ օրիշ թաքավերը կաղնած, ընդրա քըշտին հիշքա՜ն օզըմ ա էտ տըղին խուսուցընի, էտ տըղան խոսըմ չի, ղաչանք ա անում, պըղատանք ա անում, ամմա էտ տըղան խոսըմ չի։ Թաքավերը հրամման ա տամ էտ ըխճըկանը կախ տան։ Մեյդանըմը մին մըեծ սուն ըն տընգում, ըխճըկանը կըղնըցնում դաբրետկին, քյանդիրը անց կըցընում էտ ըխճըկանը կըլո՜խը։

Էտ մունուտին էտ ծունկըն փըռնող տըղան ասում ա. — Թաքավերը ապրած կըենա, հու էտ ծունկնի կըլո՜խ չի, վրեր իտի յըք անում, էտ թաքավերի ըխճըկա կըլո՜խ ա։

Իտի վրեր էտ լալիգյ տըղան խոսում ա, լոխ ուրխանում ըն, թաքավերը նըերում ա։

Ըտրեղ ըտրանք ուրուր նըհետ հա՜շտվում ըն, ուրուր խըտետ ըն ընգնում, էլ ուրուր քյեփի նի չըն կյամ։ Եր ըն կըենում, քյընում ուրա՜նց երգյիրը։

Ըտրեղ թաքավերը թա՜զա՜դա՜ն մըեծ հըրսանիք ա սարքում, մըեծ քյեփ ա ընում։

Ըտրանա ետը երգյինքան իրեք կյա՜ռմուր խընձո՜ր ա եր ընգնում, մըեղրի մընան քախծը. մինը՝ ասողին, մինը՝ կարթողին, մինն էլ՝ տիպողին։